ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Զարուհի Բաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև), 2019 թվականի հունիսի 12-14-ը

4. **Հրավիրող կողմը**

   Աշխատանքի միջազգային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*

   Մասնակցություն Աշխատանքի միջազգային կազմակերպության 108-րդ համաժողովի բարձրաստիճան լիագումար նիստին

6. **Քննարկված թեմաները**

   Այցի ընթացքում քննարկվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության 100-ամյակին, Հայաստանում աշխատանքային իրավունքներին և Հայաստանի Հանրապետության և Սիրայի Արաբական Հանրապետության աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարությունների համագործակցությանն առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի Հանրապետության եռակողմ պատվիրակությունը ղեկավարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի կողմից կողմից: Պատվիրակության կազմում են եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էդուարդ Թումասյանը, Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի անձնական օգնական Ռուզաննա Բաթոյանը:

Համաժողովի այս նստաշրջանին մասնակցել է շուրջ 5,700 աշխատող, գործատու և կառավարության ներկայացուցիչ Աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ 187 պետություններից:

Հունիսի 13-ին Նախարար Զարուհի Բաթոյանը ելույթ է ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության 108-րդ համաժողովի բարձրաստիճան լիագումար նիստին: Նախարարն իր ելույթում շնորհավորել է Աշխատանքի միջազգային կազմակերպությանը 100-ամյակի առիթով՝ ընդգծելով կազմակերպության հսկայածավալ աշխատանքի դերն անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի համար: Զարուհի Բաթոյանը տեղեկացրել է սոցիալական արդարությանը, սոցիալական պաշտպանությանը, կայուն զբաղվածությանը և արժանապատիվ աշխատանքին ուղղված կառավարության ձեռնարկած բարեփոխիչ քայլերի մասին: Նախարարը ելույթում նշել է Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության 2019-2023 թթ. «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագրի ստորագրման մասին, ինչպես նաև տեղեկացրել, որ հետհեղափոխական Հայաստանի կառավարության համար առաջնահերթ է

աշխատանքի խրախուսումը, ինչի ապացույցն է նաև նոր մեկնարկած «Աշխատիր, Հայաստան» ծրագիրը:

Զարուհի Բաթոյանը ելույթի վերջում հույս է հայտնել, որ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և անդամ պետությունները կշարունակեն իրենց ջանքերն ուղղել հանուն սոցիալական արդարության, գենդերային հավասարության և հասարակությունների բարգավաճման:

Աշխատանքի միջազգային կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Հանց Քոլլերի հետ հանդիպմանը կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ շարունակական զարգացնելու Հայաստանում սոցիալական գործընկերության համակարգը, բարելավելու աշխատանքային իրավունքներին առնչվող քաղաքականությունները և օրենսդրությունը:

Հանդիպմանը, մասնավորապես, քննարկվել են Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2019-2023 թվականների ռազմավարությանը վերաբերող հարցեր: Առաջիկայում անցկացվելու են քննարկումներ, որը նպատակ ունի հավաքելու սոցիալական գործընկերների բոլոր առաջարկությունները: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը ևս ցանկություն է հայտնել ներգրավվելու այս աշխատանքներում:

ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենի հետ հաջորդ քննարկված հարցը Հայաստանում աշխատանքի տեսչության համակարգի վերաբերյալ էր: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը տեղեկացրել է, որ այս պահին աշխատանքներ են տարվում Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» 1947 թ. ընդունված թիվ 81 Կոնվեցիայի պահանջներին հայաստանյան օրենսդրությունը համապատասխանեցնելու հարցը: Աշխատողների աշխատանքի պայմանների և պաշտպանության հետ կապված իրավական դրույթների բարելավման համար Աշխատանքի միջազգային

կազմակերպությունը փորձագիտական աջակցություն է տրամադրելու Հայաստանի Հանրապետությանը:

Այդ համատեքստում քննարկվել է նաև Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը, որը ևս իրականացվելու է կազմակերպության և սոցիալական գործընկերների հետ սերտ համագործակցությամբ: Հանդիպմանը հակիրճ անդրադարձ է եղել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկություններին առնչվող հարցերին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը հանդիպել է Սիրիայի Արաբական Հանրապետության սոցիալական հարցերի և աշխատանքի նախարար Ռիմա ալ-Քադիրի գլխավորած պատվիրակության հետ:

Ռիմա ալ-Քադիրը ներկայացրել է պատերազմի հետևանքով նախարարության առաջ ծառացած մարտահրավերները ՝ ակնկալելով Հայաստանի աջակցությունը սիրացի փախստականների իրավունքների հարցին հնչեղություն տալու, միջազգային ասպարեզում սոցիալական աջակցության իրավունքի դաշտում համագործակցելու գործում:

Նախարար Զարուհի Բաթոյանը հույս է հայտնել, որ Սիրիան կհաղթահարի դժվարին մարտահրավերները, և հայտնել է իր զորակցությունը: Նախարարը ներկայացրել է այն ծրագրերը, որոնք իրականացվում են Սիրիայի Արաբական Հանրապետությունից Հայաստան տեղափոխված անձանց սոցիալական ներառման և աջակցության համար, ինչպես նաև տեղեկություններ է փոխանցել հումանիտար աջակցության մասին: Կողմերը քննարկել են համագործակցության առաջիկա հնարավորությունները:

Ռիմա ալ-Քադիրը նախարար Զարուհի Բաթոյանին հրավիրել է Սիրայի Արաբական Հանրապետություն՝ նախարարությունների միջև համագործակցությունը զարգացնելու և նոր թափ հաղորդելու նպատակով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում Հայաստանի պատվիրակության մասնակցությամբ փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Ստեղծել աշխատանքային խումբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» 1947 թ. ընդունված 81 Կոնվեցիայի պահանջներին համապատասխանեցնելու և աշխատանքի տեսչության համակարգի մշակման գործընթացը մասնակցային դարձնելու նպատակով:
- Ուսումնասիրել Ճամայկայի՝ գործազրկությունը հաղթահարելու փորձը:
- Նախաձեռնել ինքնազբաղ (freelance) անձանց աշխատանքային իրավունքները կարգավորող և նման աշխատանքը խրախուսող աշխատանքներ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

X _____

19.06.2019 թ.